Թուրքը երբեք չվստահեց ու կասկածանքով նայեց կրօնափոխ հայերի անկեղծութեանը, նրանց պահած ծոմին, ու կատարած *նամազին*:

Ի հարկէ, շատ են նաեւ առերեւոյթ կրօնափոխ «թաքուն» կամ «ծպտեալ» հայերը, որոնք իրենք իրենց մէջ իրարու «մերիններ» կամ «դարձած» են անուանում եւ փորձում են պահել իրենց սեղմ շրջանակը: Խուսափում են թուրքի կամ քուրդի հետ ամուսնութիւն կնքելուց: Երրորդ սերնդին պատկանող Սուլթանը պատմում է Եալչընին, թէ ինչպէս իր մեծհայրը պարտադրուել էր իր մի աղջկան քուրդի տալու ու միշտ լացով էր յիշում, թէ աղջկան զոհ էր տուել: Նոյն պարտադրանքի տակ չմնալու համար, միւս աղջկան՝ Սուլթանի մօրը, տասներկու տարեկանում ամուսնացրել էր երեսուն տարեկան մահմեդական հայի հետ: Հաճը Իպրահիմն էլ յիշում է, թէ ինչպէս իր գեղեցիկ քրոջը քուրդ Աղային չտալու համար, հայրը նրան «մերիններէն ճաղատ, տգեղ, աղքատ ու որբ հովուի մը հետ կարգեց»: Վահրամը Եալչընին պատմում է իրեն տանջող զղջումի ու խղճի խայթի մասին, թէ ինչպէս սեփական կաշին ազատելու համար Իսլամ կրօնն էր ընդունել: Բայց կրօնափոխ կամ քրիստոնեայ, թուրքի համար հայը «գեաւուր» մնաց կամ «գեաւուրօղլու»: Վահրամն էլ Մէրզիֆոնի միւս հայերի պէս համեմատական ազատութիւնը Պոլսում գտաւ, ու Մէրզիֆոնն էլ միւս հայաբնակ վայրերի պէս դատարկուեց հայերից:

Կրօնափոխ կամ քրիստոնեայ, Ցեղասպանութիւնից ազատուած ու երկրի ներսում ցրուած հայերը կորցրել են իրենց մայրենի լեզուն: Ազգային ինքնութեան այդ կարեւոր տարրը խլուած է նրանցից, իսկ «բազմազգ ու բազմամշակոյթ Գերմանիոյ մէջ, մայրենի լեզուն ու անոր